ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Հնաբերդ համայնք,Գ.Լուսավորիչ փ. 3
Հեռ. 098025050,hnaberd.ararat@mta.gov.am

07 հուլիսի 2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2019 թվականի հուլիսի 3-ին ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար Մարատ Պողոսյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Արմենուհի Հովհաննիսյանը, մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և համայնքի բնակիչներ:

Լսեցին հաշվետվություն՝ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի ղեկավար Մարատ Պողոսյանի 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հնաբերդ համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1.Գարնան սկզբին աջակցություն է ցուցաբերվել համայնքի բնակչությանը գյուղատնտեսական տարին ճիշտ և լիարժեք կազմակերպելու հարցում:

2. Համայնքապետարանի աշխատակազմը բնակիչներից ստացել է 30 գրավոր դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ , որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի և ավագանու նիստերի ժամանակ, տրվել են համապատասխան լուծումներ:

3.համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից կազմակերպվել են մի շարք միջոցառումներ .

1/Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի կազմավորման օրվա կապակցությամբ,

2/Փետրվարի 13-ին՝ Տյառնընդառաջի տոնին նվիրված,

3/Մայիսի 9-ին՝ ցերեկույթ նվիրված մայիսյան տոներին,հրավիրվել էին ազատամարտիկներ և պատերազմի վետերաններ:

Ստորև ներկայացվում է 2019 թվականի համայնքի բյուջեի առաջին կիսամյակի ամփոփումը.

1.բյուջեի եկամուտները կազմել են՝

ա/հողի հարկ՝ 315 000 դրամ /20 % /,
բ/գույքահարկ՝ 1 138 550 դրամ /50% /,
գ/տեղական տուրքեր՝
այդ թվում՝ աղբահանության վճար՝ 225 000դրամ,
շինարարության թույլտվության վճար՝ 82 500 դրամ,
հիմնական շինության ներսում ծխախոտի արտադրանքի և ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության վճար՝ 45 000 դրամ:

2.բյուջեի ծախսերը հետևյալն են՝

էներգետիկ ծառայություններ՝ 119 872 դրամ,
կոմունալ ծառայություններ՝ 7 650 դրամ,
ծառայողական ավտոմեքենայի ապահովագրական ծառայություններ՝ 31 000 դրամ,
տրանսպորտային նյութեր՝ 115 935 դրամ,
աշխատողների աշխատավարձ՝ 5 233 492 դրամ,
տրանսպորտային սարքավորումներ՝ 650 000 դրամ
ֆինանսական աջակցություն բնակիչներին՝ 180 000 դրամ
աղբահանություն՝ 225 000 դրամ,
ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 50 000 դրամ
համակարգչային ծառայություններ՝ 30 000 դրամ,
կենցաղային և հանրային սննդինյութեր՝ 60 000 դրամ,
անասնաբուժական ծառայություններ՝ 162 000 դրամ,
հատուկ նպատակային այլ նյութեր՝ 241 250

Արձանագրվեց նաև,որ համայնքում սեփական եկամուտների հավաքագրմանը բնակիչների մասնակցությունը առաջին կիսամյակի ընթացքում պասիվ է եղել և մասնավորապես հողի հարկի գծով վճարումները պատշաճ չի կատավել:Դիմելով բնակչությանը՝ համայնքի ղեկավարը նշեց,որ հարկավոր է առաջիկայում այդ խնդրին լուծում տրվի և սեփական եկամուտների հավաքագրումը հողի հարկի գծով հասցվի 50 %-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Կատ.Աշխատակազմի քարտուղար՝Ա.Հովհաննիսյան
/Հեռ. 041737302 /